

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2010 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 1057-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1925-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1057-Ն որոշումը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 38-րդ կետի ը) ենթակետի առաջին պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ` «Մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղագերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» օգտագործման դեպքում նշվում է «Պատրաստված է չոր կաթի (շիճուկի, սերուցքի) օգտագործմամբ» բառակապակցությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1057-Ն որոշումը չեղյալ ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1057-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգում կատարվել է լրացում, ըստ որի մթերքի բաղադրության մեջ «անարատ կաթի», «անարատ չոր կաթի», «չոր յուղագերծ կաթի», «կաթնային չոր շիճուկի» և (կամ) «անարատ չոր սերուցքի» պարունակության դեպքում պետք է նշվի դրանց զանգվածային մասերը՝ տոկոսներով»: Որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի մարտի 30-ից:

Որոշման ընդունումից հետո սակայն պարզվել է, որ Հայաստանում չկա որևէ փորձարկման լաբորատորիա, որը փորձաքննությամբ կարողանա որոշել մթերքի բաղադրության մեջ չոր կաթի (շիճուկի, սերուցքի) պարունակության տոկոսը, որի հետևանքով հնարավոր չէ որոշմամբ սահմանված պահանջի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

Մյուս կողմից վերը նշված որոշումը խնդիրներ է առաջացնում նաև կաթնամթերք արտադրող ընկերությունների համար, որոնք կաթի արտադրության սեզոնայնության հետ կապված արտադրանքի բաղադրությունում անընդհատ փոխում են չոր կաթի օգտագործման տոկոսային պարունակությունը, որի հետ կապված անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել նաև մակնշվածքում, իսկ փաթեթավորող նյութերը (հատկապես՝ փայլաթիթեղը) և տարաները նրանք հիմնականում ներկրում են արտասահմանից՝ մեծ քանակությամբ, բաղադրության վերաբերյալ արդեն իսկ մակնշված տեսքով (հարցին լուծում տալու խնդրանքով ՀՀ վարչապետին են դիմել նաև «ՀՀ կաթնարտադրության զարգացման ասոցիացիա» սպառողական կոոպերատիվի նախագահը, «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի, «Մարիաննա» ՀԶ ՍՊԸ-ի, «Չանախ» և «Բիոկաթ» ՍՊԸ-ների տնօրենները):

Որոշման նախագծով առաջարկվող լրացումը մշակելու համար հիմք է ընդունվել Ռուսաստանի Դաշնությունում գործող կաթի և կաթնամթերքի տեխնիկական կանոնակարգի համապատասխան դրույթը:

Որոշման նախագծի ընդունման արդյունքում կապահովվի սպառողների շահերի պաշտպանությունը և կխթանվի կաթնամթերք արտադրող տնտեսավարողների միջև մրցակցությունը: